



Ֆինանսական հաշվետվություններ և  
Անկախ աուդիտորական եզրակացություն

"Ա - ԹԻ ՎԻ"

սահմանափակ պատասխանատվությամբ  
ընկերություն

31 դեկտեմբերի 2023թ.

## Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	<u>3</u>
<u>Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն</u>	<u>5</u>
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	<u>6</u>
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	<u>7</u>
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	<u>8</u>
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	<u>9</u>

**"Ֆոր Էյ Բնասլոնգ" ՓԲԸ**



**"Four A Consulting" CJSC**

audit 1 20 0219  
Հասցե Նալբանդյան 50/136, ք Երևան ՀՀ,  
Հեռախոս +374(10) 52 08 47

accounting advisory  
www.4aconsulting.am  
info@4aconsulting.am

assurance  
CAA NGO Register 1 20 0219  
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA  
Telephone +374(10) 52 08 47

**Անկախ աուդիտորական եզրակացություն**

**"Ա-ԹԻՎԻ" ՍՊԸ -ի մասնակցին,**

**Կարծիք**

Մենք աուդիտի ենք ենթարկել "Ա-ԹԻՎԻ" ՍՊԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՄ):

**Կարծիքի հիմք**

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ "Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար" բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրի" (ՀԷՄՍԽ կանոնագիրը) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

**Անընդհատության հիմունքին վերաբերող էական անորոշություն**

Ձեր ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 25-ի վրա, որտեղ նշվում է, որ Ընկերությունը կրել է 14,539 հազար դրամ գումարի գույք կորուստ 2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում, և այդ ամսաթվի դրությամբ Ընկերության ընթացիկ պարտավորությունները գերազանցել են իր ընդհանուր ակտիվները 403,405 հազար դրամ գումարի չափով: Այս դեպքերը կամ իրավիճակները, ի թիվս Ծանոթագրություն 25-ում նշված այլ հարցերի, ցույց են տալիս, որ առկա է էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ:

Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հարցի կապակցությամբ:

**Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը**

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ի համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության

գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի յրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած՝ հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորվել մեր կարծիքը:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

26 ապրիլ 2024թ.

Անիկ Մարտիրոսյան

.Տնօրեն/ Աուդիտի ղեկավար-Բաժնետեր



## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	25,577	34,261
Ոչ նյութական ակտիվներ	5	191	193
Հետաձգված հարկային ակտիվներ	6	32,140	40,328
		<u>57,908</u>	<u>74,782</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	7	9,889	40,647
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	25,515	61,600
Շահութահարկի կանխավճար		-	-
Դրամական միջոցներ	9	2,009	5,815
		<u>37,413</u>	<u>108,062</u>
Ընդամենը ակտիվներ		<u>95,321</u>	<u>182,844</u>
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Կանոնադրական կապիտալ	10	500	500
Կուտակված վնաս		(403,905)	(389,366)
		<u>(403,405)</u>	<u>(388,866)</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Փոխառություններ	11	205,835	267,751
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	292,891	303,959
		<u>498,726</u>	<u>571,710</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>95,321</u>	<u>182,844</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 26 ապրիլ 2024թ.

Ելենա Արշակյան  
Գլխավոր տնօրեն



Գայանե Ստեփանյան  
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գովազդային ծառայությունների մատուցումից հասույթ		333,251	421,943
Այլ եկամուտներ		29,535	40,666
		<u>362,786</u>	<u>462,609</u>
Սեփական հաղորդումների, ֆիլմերի ծախսեր		(37,061)	(35,075)
Ձեռք բերված ֆիլմերի և հաղորդումների ծախսեր		(110,200)	(31,738)
Հեռարձակման ծախսեր		(61,050)	(60,050)
Փոխհատուցում աշխատակիցներին		(104,103)	(271,651)
Վարձակալության ծախսեր		(24,400)	(45,552)
Մաշվածություն և ամորտիզացիա		(10,017)	(12,110)
Այլ ծախսեր	13	(21,809)	(22,919)
Գործառնական գործունեությունից վնաս		<u>(5,854)</u>	<u>(16,486)</u>
Ֆինանսական, զուտ		80	58
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	14	(577)	4,810
Վնաս մինչև հարկերը		<u>(6,351)</u>	<u>(11,618)</u>
Շահութահարկի գծով ծախս/փոխհատուցում	15	(8,188)	6,178
Չուտ վնաս		<u>(14,539)</u>	<u>(5,440)</u>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ <i>Հողվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի շահույթին կամ վնասին</i>		-	-
<i>Հողվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին</i>		-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		<u>(14,539)</u>	<u>(5,440)</u>

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	500	(383,926)	(383,426)
Տարվա վնաս 2021թ.	-	(5,440)	(5,440)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	(5,440)	(5,440)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	500	(389,366)	(388,866)
Տարվա վնաս 2023թ.	-	(14,539)	(14,539)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	(14,539)	(14,539)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	500	(403,905)	(403,405)

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Տարվա վնաս	(14,539)	(5,440)
<i>Ճշգրտումներ՝</i>		
Մաշվածություն և ամորտիզացիա	10,017	12,110
Ոչ նյութական ակտիվների և հիմնական միջոցների դուրս գրումից վնաս	-	4,832
Շահութահարկի գծով ծախս /փոխհատուցում	8,188	(6,178)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	577	(4,810)
Ֆինանսական եկամուտ	(80)	(58)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	4,163	456
Առևտրային և այլ դերիտորական պարտքերի փոփոխություն	36,092	(17,738)
Պաշարների փոփոխություն	30,758	(30,970)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(11,688)	64,610
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	59,325	16,358
Վճարված շահութահարկ /փոխհատուցում	-	398
Վճարված տոկոսներ	-	-
<i>Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	59,325	16,756
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,331)	(14,511)
Ստացված տոկոսներ	80	58
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	(1,251)	(14,453)
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Փոխառություններ, զուտ	(61,916)	-
Նախորդ տարվա ճշգրտում	-	-
<i>Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	(61,916)	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ ան/(նվազում)	(3,842)	2,303
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	36	(151)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	5,815	3,663
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	2,009	5,815

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

## 1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Ընկերությունը հիմնադրվել է 1999թ. "ԱՍ Թ-Վ-Ի" սահմանափակ պատասխանատվություն անվանումով: Ընկերության կանոնադրությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում՝ 1999թ դեկտեմբերի 20-ին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: 2000թ հոկտեմբերի 5-ին ընկերությունը իրավաբանական անձանց պետական ռեգիստրում վերաձևակերպվել է որպես "Արմենակոբ - Թ-Վ-Ի" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն: 2009թ ապրիլի 7-ին ընկերությունը վերանվանվել է "Ա-Թ-Վ-Ի" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Ընկերության միակ մասնակիցն էր.

Դավիթ Ավետիսյան 100 տոկոս:

Ընկերության հիմնական գործունեությունն է հանդիսանում հեռուստադրագրերի եթերային հեռարձակումը:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Եղվարդի խճուղի 1:

2023թ. Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 19 մարդ (2022թ.՝ 33 մարդ):

## 2. Պատրաստման հիմքերը

### 2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են են փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

### 2.2 Ծանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա գեղչված արժեքով:

### 2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Մույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

### 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 16-ում:

**3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն**

**3.1 Արտարժույթ**

*Արտարժույթով գործարքներ*

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (<< ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ << ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են << Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	4.50	5.59
ԱՄՆ դոլար	404.79	393.57
Եվրո	447.90	420.06

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

**3.2 Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են արտադրական, վարչական կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները:

Սկզբնական ճանաչման պահին հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով: Ձեռք բերված հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները: Գործարկման և նման նախատարադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում, եթե դրանք անհրաժեշտ չեն ակտիվն աշխատանքային վիճակի բերելու համար: Սեփական ուժերով կառուցվող հիմնական միջոցների սկզբնական արժեքը որոշվում է նույն սկզբունքներով, ինչ պաշարների ինքնարժեքը: Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները մինչև դրանց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելը հանդիսանում են անավարտ հիմնական միջոցներ և հաշվառվում են դրանց ինքնարժեքով:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ ներառվում է այլ ակտիվի ինքնարժեքում՝ կիրառելով գծային մեթոդը՝ հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Կառուցվածքներ	8 տարի
Մեքենաներ, սարքավորումներ	1-8 տարի
Արտադրական գույք	1-8 տարի
Տնտեսական գույք	1-8 տարի
Համակարգչային տեխնիկա	1-5 տարի
Այլ հիմնական միջոցների դասեր	1-5 տարի:

**3.3 Ոչ նյութական ակտիվներ**

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

**3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվներ արժեզրկում**

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է , ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

**3.5 Վարձակալված ակտիվներ**

Ընկերության վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները գծային հիմունքով ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության, ծախսագրվում են իրականացման պահին:

**3.6 Պաշարներ**

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

**3.7 Ֆինանսական գործիքներ**

*Ճանաչում և սպասճանաչում*

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապահանջվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալից ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապահանջվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

*Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում*

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

**I. ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով**

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Ընկերության կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ամանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

**II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ**

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

III. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով, ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են և ներառում են առևտրային բանկերում ավանդները: Ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե Ընկերության ղեկավարությունը մտադրված է պահել դրանք մինչև դրանց մարման ժամկետը:

IV. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

V. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

VI. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

*Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

*Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում*

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

i. Փոխառություններ

Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը գուժահետ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

ii. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

**3.8 Սեփական կապիտալ**

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Ծահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

**3.9 Հատուցումներ աշխատակիցներին**

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

**3.10 Ծահութահարկ**

Ընթացիկ հարկն իրենից ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման (փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարը: Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) պետք է չափվեն այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի պետական բյուջե (կփոխհատուցվի պետական բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Ընկերության հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները և հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) և չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ: Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են իրացվել չօգտագործված հարկային վնասները և փոխհատուցումները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այն չափով, որքանով այլևս հավանական չէ, որ դրան առնչվող հարկային օգուտները կիրացվեն:

**3.11 Հասույթի ճանաչում**

Ընկերության հասույթն առաջանում է հիմնականում հեռուստագովազային ծառայությունների մատուցումից:

4. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Կառուցվածքներ	Մեքենա-սարքավորումներ, տեխնիկա	Արտադրական և տնտեսական գույք, համակարգչային տեխնիկա, այլ	Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>					
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	9,826	216,883	38,881	-	265,590
Ավելացում	-	664	4,530	8,237	13,431
Ներքին շարժ	2,285	267	5,417	(7,969)	-
Օտարում	-	(53,828)	(6,904)	-	(60,732)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,111	163,986	41,924	268	218,289
Ավելացում	-	241	-	-	241
Ներքին շարժ	-	-	-	-	-
Օտարում	-	-	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,111	164,227	41,924	268	218,530
<i>Կուտակված մաշվածություն</i>					
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	2,042	197,283	31,018	-	230,343
Տարվա ծախս	1,314	6,153	2,118	-	9,585
Օտարում	-	(53,828)	(2,072)	-	(55,900)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,356	149,608	31,064	-	184,028
Տարվա ծախս	1,343	5,768	1,814	-	8,925
Օտարում	-	-	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,699	155,376	32,878	-	192,953
<i>Հաշվեկշռային արժեք</i>					
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,755	14,378	10,860	268	34,261
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,412	8,851	9,046	268	25,577

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հիմնական միջոցները գրավադրված չեն: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 167,225 հազ. դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են գրոյական հաշվեկշռային արժեքով (2022թ.՝ 163,758 հազ. դրամ):

Մաշվածության գծով ծախսը բաշխվել է 1,141 հազ. դրամը՝ վարչական ծախսերին (2022թ.՝ 982 հազ. դրամ), 7,784 հազ. դրամը՝ ինքնարժեքին (2022թ.՝ 8,603 հազ. դրամ):

**5. Ոչ նյութական ակտիվներ**

Հազ. դրամ	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ, հավաստագրեր և այլն	Ընդամենը
<i>Սկզբնական կամ գնահատված արժեք</i>			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	2,635	5,470	8,105
Ավելացում	-	1,080	1,080
Նվազում (դուրսգրում)	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,635	6,550	9,185
Ավելացում	-	1,090	1,090
Նվազում (դուրսգրում)	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,635	7,640	10,275
<i>Կուտակված մաշվածություն</i>			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	2,635	3,832	6,467
Տարվա ծախս	-	2,525	2,525
Նվազում (դուրսգրում)	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,635	6,357	8,992
Տարվա ծախս	-	1,092	1,092
Նվազում (դուրսգրում)	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,635	7,449	10,084
<i>Հաշվեկշռային արժեք</i>			
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	193	193
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	191	191

**6. Հետաձգված հարկեր**

Հետաձգված հարկերի շարժը հետևյալն է՝

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	40,328	34,150
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված փոխհատուցում (ծանոթ. 15)	(8,188)	6,178
Տարեվերջի մնացորդ	32,140	40,328

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2023թ. հունվարի 1	Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2023թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Արձակուրդի պահուստ	1,153	(237)	916
Հիմնական միջոցներ	5,208	(3,108)	2,100
Հարկային վնաս	33,967	(4,843)	29,124
	40,328	(8,188)	32,140
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
	-	-	-
Չուտ արդյունք հետաձգված հարկեր	40,328	(8,188)	32,140

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	2022թ. հունվարի 1	Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2022թ. դեկտեմբերի 31
Հազար դրամ			
Հետաձգված հարկային ակտիվներ			
Արձակուրդի պահուստ	1,633	(480)	1,153
Հիմնական միջոցներ	3,051	2,157	5,208
Հարկային վնաս	29,466	4,501	33,967
	34,150	6,178	40,328
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-
Չուտ արդյունք հետաձգված հարկեր	34,150	6,178	40,328

**7. Պաշարներ**

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անավարտ արտադրանք	2	39,312
Նյութեր	8,565	3
Ծինանյութ	-	-
Ապրանքներ պահեստում	345	345
Այլ	977	987
	9,889	40,647

**8. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր**

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հազար դրամ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	23,270	57,940
Տրված կանխավճարներ	200	1,416
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	1,979	2,244
Այլ	66	-
	25,515	61,600

Ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքերի միջին տևողությունը կազմում է 26 օր (2022թ.՝ 50 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

**9. Դրամական միջոցներ**

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հազար դրամ		
Դրամարկղ	16	16
Մնացորդներ բանկերում դրամով	1,993	5,799
	2,009	5,815

**10. Սեփական Կապիտալ**

**10.1 Կանոնադրական կապիտալ**

Բաժնետոմսերի քանակը,

	Սովորական բաժնետոմսեր 2023թ.	Սովորական բաժնետոմսեր 2022թ.
Թողարկված և ամբողջովին վճարված բաժնետոմսեր		
Սովորական բաժնետոմսեր 500 դրամ յուրաքանչյուրը	1,000	1,000

Ընկերության կանոնադրական կապիտալը ամբողջությամբ վճարված: Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

**Ճահաբաժիններ**

Ընկերությունը 2023թ. և 2022թ. շահաբաժին չի վճարել:

**11. Փոխառություններ**

Հազար դրամ

	Ընթացիկ	
	2023թ.	2022թ.
Չապահովված փոխառություն	205,835	267,751
	<u>205,835</u>	<u>267,751</u>

Ընկերությունը անտոկոս փոխառությունը ստացել է "Արմենիա ԹԻ-ՎԻ" ՓԲԸ-ից՝ 205,130 հազ. դրամ և Հրայր Զեչիշյանից՝ 705 հազ. դրամ: Փոխառության մարման ժամկետն է 31 դեկտեմբեր 2024թ.:

**12. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր**

Հազար դրամ	2023թ.	2022թ.
	դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	112,446	154,776
Ստացված կանխավճարներ	41,554	341
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	8,622	16,898
Հատուցումներ աշխատակիցներին	4,331	23,289
Չօգտագործած արձակուրդի պահուստ	5,087	6,408
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	119,582	99,202
Այլ կրեդիտորական պարտքեր	1,269	3,045
	<u>292,891</u>	<u>303,959</u>

**13. Այլ ծախսեր**

Հազար դրամ	2023թ.	2022թ.
	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հաղորդակցման և գրասենյակային ծախսեր	4,378	4,800
Բանկային և ապահովագրական ծախսեր	2,083	2,517
Ծախսեր տույժ, տուգանքներից	101	527
Մարկետինգի և գովազդի ծախսեր	1,000	-
Տրանսպորտային ծախսեր	1,006	4,571
Նվիրատվություն	-	100
Հիմնական միջոցների օտարումների ծախսեր	-	4,802
Այլ ծախսեր	13,241	5,602
	<u>21,809</u>	<u>22,919</u>

**14. Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս**

Հազար դրամ	2023թ.	2022թ.
	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը		
Առևտրային դեբիտորական պարտքեր	7	(12)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	36	(151)
Առևտրային կրեդիտորական պարտքեր	(620)	4,973
	<u>(577)</u>	<u>4,810</u>

**15. Ծահուրահարկի գծով ծախս**

Հազար դրամ	2023թ.	2022թ.
	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ		
Հետաձգված հարկ	8,188	(6,178)
	<u>8,188</u>	<u>(6,178)</u>

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավե տ հարկային դրույքաչափ (%)	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավե տ հարկային դրույքաչափ (%)
Հազար դրամ				
Վնասը մինչև հարկումը	(6,351)		(11,618)	
Շահութահարկ՝ 18% (2022թ.՝ 18 տոկոս)	(1,143)	(18.00)	(2,091)	(18.00)
Չնվազեցվող ծախսի ազդեցությունը	9,331	146.92	(4,087)	(35.18)
		128.		
Շահութահարկի գծով ծախս	8,188	92	(6,178)	(53.18)

**16. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ**

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի և այլ ցուցանիշների վրա, ներառյալ՝ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

*Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները*

Ընկերության ղեկավարությունը գնահատել է հիմնական միջոցների օգտակարության ժամկետները: Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ այդ ակտիվների գնահատված օգտակարության ժամկետները էականորեն չեն տարբերվում սպասվելիք տնտեսական ժամկետներից: Եթե այս գնահատումները փոխվեն ապա Ընկերության ֆինանսական հաշվետվությունները էականորեն կտարբերվեն:

*Հետաձգված հարկի գնահատում*

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 6-ում, 2023թ.-ին 32,140 հազ. դրամի հետաձգված հարկեր են ճանաչվել: Հետաձգված հարկային ակտիվներն առաջացել են արձակուրդի պահուստի, հիմնական միջոցների և հարկային վնաս գծով:

**17. Ֆինանսական գործիքներ**

**17.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ**

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.7-ում:

**17.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

*Ֆինանսական ակտիվներ*

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հազար դրամ		
<i>Փոխառություններ և դեբիտորական պարտքեր</i>		
Առևտրային դեբիտորական պարտքեր	23,270	57,940
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	2,009	5,815
	25,279	63,755

*Ֆինանսական պարտավորություններ*

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Անորոշագիտն արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Փոխառություններ	205,835	267,751
Առևտրային կրեդիտորական պարտքեր	242,715	286,720
	<u>448,550</u>	<u>554,471</u>

**18. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ**

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

**18.1 Ֆինանսական ռիսկի գործոններ**

*ա) Շուկայական ռիսկ*

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

*բ) Արտարժույթային ռիսկ*

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության՝ արտերկրյա ձեռքբերումներից: Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

Հոդված	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Բուրլի
2023թ.			
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Առևտրային դեբիտորական պարտքեր	23,108	162	
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	1,827	176	6
	<u>24,935</u>	<u>338</u>	<u>6</u>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>			
Փոխառություններ	205,835		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտավորություններ	220,069	22,646	-
	<u>425,904</u>	<u>22,646</u>	<u>-</u>
Զուտ արդյունք	<u>(400,969)</u>	<u>(22,308)</u>	<u>6</u>
Հոդված			
2022թ.			
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Առևտրային դեբիտորական պարտքեր	57,791	149	-
Փոխառություններ	-	-	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	4,860	955	-
	<u>62,651</u>	<u>1,104</u>	<u>-</u>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>			
Փոխառություններ	267,751	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական	264,161	22,559	-

պարտավորություններ

	531,912	22,559	-
Չուտ արդյունք	(469,261)	(21,455)	-

Չգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2021թ.՝ 10%):

Հազար դրամ

ԱՄՆ դոլարի ազդեցություն

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2023թ. 2022թ.

(2,230) (2,146)

Հազար դրամ

Ռուբլու ազդեցություն

2023թ. 2022թ.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

(1) -

*գ) Տոկոսադրույքային ռիսկ*

Ընկերությունը չի ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի:

*զ) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

*դ) Իրացվելիության ռիսկ*

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

**19. Իրական արժեք**

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

**20. Կապիտալի ռիսկի կառավարում**

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունն առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված վնասը:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա: Հաշվարկը ներկայացվում է ստորև.

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հազար դրամ		
Ընդհանուր սեփական կապիտալ	(403,405)	(388,866)
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(2,009)	(5,815)
Կապիտալ	(405,414)	(394,681)
Ընդհանուր սեփական կապիտալ	(403,405)	(388,866)
Փոխառություններ	205,835	267,751
Ընդհանուր ֆինանսավորում	(197,570)	(121,115)
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	2,05	3.26

## 21. **Պարտավորվածություններ**

### 21.1 **Կապիտալ ներդրումների գծով պարտավորվածություններ**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը կապիտալ ծախսումների գծով պարտավորվածություններ չունի:

### 21.2 **Ընկերությունը որպես վարձակալ**

"ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ" ՓԲԸ-ից Ընկերությունը 2013թ. հունվարից գործառնական վարձակալությանը ստացել է ՀՀ, ք. Երևան, Եղվարդի խճուղի 1 հասցեում տարածք ամսական 2,440 հազ. դրամ ներառյալ ԱԱՀ:

## 22. **Պայմանական պարտավորություններ**

### 22.1 **Գործարար միջավայր**

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և կենտրոնական բանկը տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցությունը մեղմացնելու նպատակով իրականացնում են շարունակական միջոցառումներ: Ի թիվս այլ միջոցառումների, վերջիններս ներառում են նաև տուժած ճյուղերի և անհատների փոխառությունների սուբսիդավորում և վարկային «արձակուրդներ»:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Ընկերությունը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Ընկերության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

### 22.2 **Ապահովագրություն**

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերությունը չունի իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Ընկերության գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական դրության վրա:

**22.3 Պայմանական հարկային պարտավորություններ**

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ։ Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ։ Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր։

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում։ Ղեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա։ Այնուամենայնիվ, համապատասխան իշխանությունների մեկնաբանությունները կարող են տարբերվել։

**23. Գործարքներ կապակցված կողմերի հետ**

**23.1 Գործարքներ ղեկավարության հետ**

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը՝

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	20,890	18,906

**24. Տրված երաշխիքներ**

Ընկերությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունի տրված երաշխավորություններ 1,057,398 հազար դրամի ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ-ին՝ "Մեդիա Ինթերնեշնլ Սերվիս" ՓԲԸ-ի համար։

**25. Անընդհատություն**

Ընկերությունը կրել է 14,539 հազար դրամ գումարի գուտ կորուստ 2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում, և այդ ամսաթվի դրությամբ Ընկերության ընթացիկ պարտավորությունները գերազանցել են իր ընդհանուր ակտիվները 403,405 հազար դրամ գումարի չափով։

Ընկերության գուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից։ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների համաձայն Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել կանոնադրական կապիտալի նվազումը։ Այս գործոնների առկայությունը կասկածներ են առաջացնում Ընկերության անընդհատ գործելու վերաբերյալ։

Հաշվի առնելով Ընկերության գործունեության զարգացման ծրագիրը ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը կկարողանա ապահովել իր շարունակական գործունեությունը։